ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 77-Լ	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2024.01.08-2024.01.21 Պաշտոնական հրապարակման օրը 18.01.2024	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	18.01.2024
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	18.01.2024
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	19.01.2024	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Հավաստագրված տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1087-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2024 թվականի N 77-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սերմերի և տնկանյութի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր և տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր և տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին» N 24-Ն որոշումը:

3. Հավաստագրված տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանի վարման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 1-ի N 1087-Ն որոշման մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

18.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 18-ի N 77-Լ որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում հավաստագրված սերմեր և տնկանյութ արտադրող, ներկրող ու արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց (այսուհետ՝ հայտատու) հաշվառման գրանցամատյանի վարման ընթացակարգը:

2. Հավաստագրված սերմեր և տնկանյութ արտադրողների, ներկրողների և արտահանողների հաշվառման գրանցամատյանը (այսուհետ՝ գրանցամատյան) «Սերմերի և տնկանյութի մասին» օրենքի և սույն կարգի համաձայն վարում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

2. ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

3. Հայտատուն գրանցամատյանում հաշվառվելու նպատակով լիազոր մարմին ներկայացնում է՝

1) հայտ՝ համաձայն ձևի.

2) անձնագրի պատճեն (ֆիզիկական անձինք).

3) պետական գրանցման վկայականի պատճեն (իրավաբանական անձինք):

4. Հայտը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը հայտատուին գրավոր տեղեկացնում է հաշվառման մասին՝ նշելով գրանցամատյանում հաշվառման համարը, հաշվառման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը:

5. Լիազոր մարմինը հայտատուին գրանցամատյանում հաշվառում է 2 տարի ժամկետով:

6. Գրանցամատյանում հաշվառման ժամկետը երկարաձգելու համար հայտատուն մինչև սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետի լրանալը՝ 15 աշխատանքային օր առաջ, լիազոր մարմին է ներկայացնում հաշվառման ժամկետը երկարաձգելու հայտ:

7. Հայտատուն գրանցամատյանում հաշվառումից հանվում է՝

1) գրանցամատյանում հաշվառման պահից 2 տարին լրանալու դեպքում.

2) սույն կարգի 6-րդ կետով սահմանված հայտ չներկայացնելու դեպքում.

3) լիազոր մարմին ներկայացված իր դիմումի հիման վրա:

8. Գրանցամատյանում հաշվառումից հանելու վերաբերյալ դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմինը դիմումատուին գրավոր տեղեկացնում է հաշվառումից հանելու մասին:

9. Հայտատուն գրանցամատյանում առկա տեղեկություններում փոփոխություններ կատարելու համար՝ գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10. Լիազոր մարմինը վարում է գրանցամատյանի էլեկտրոնային տարբերակը:
11. Գրանցամատյանում հայտատուի հաշվառման համարն այլ հայտատուի չի տրամադրվում:

Ձև

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ (ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

1. Հայտատուի ազգանունը, անունը կամ անվանումը
_____

2. Բնակության վայրը կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը, հեռախոսահամարը
_____
_____

3. Գործունեության իրականացման վայրը
_____
(սերմնադաշտի կամ տնկարանի հասցեն)
_____

4. Հայտատուի գործունեության տեսակը/ոլորտը
_____

5. Մշակաբույսի տեսակը
_____

6. Հայտատուի հաշվառման ժամկետը երկարաձգելու դեպքում՝ հաշվառման գրանցամատյանում հայտատուի հաշվառման համարը_____

Հայտատու _____
(ստորագրությունը,
_____
ազգանունը, անունը կամ անվանումը)

_____ _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

18.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունվարի 18-ի N 77-Լ որոշման

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԱՆՅՈՒԹ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ, ՆԵՐԿՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Հաշվառման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Հայտատուի անունը, հայրանունը, ազգանունը կամ անվանումը	Բնակության վայրը կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը, հեռախոսահամարը	Սերմնադաշտի կամ տնկարանի գտնվելու վայրը	Հայտատուի գործունեության տեսակը/ոլորտը	Մշակաբույսի տեսակը	Հաշվառումից հանելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը	Ծանոթագրություն

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Ա. Հարությունյան**

18.01.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 18 հունվարի 2024 թվական: